Պարույր Սևակ

Հանգստանում եմ

Ուզում եմ այսօր մի պահ մոռանալ
Հոգսը, խորհուրդը, գործը աշխարհի.
Ուզում եմ այսօր մի պահ հեռանալ
Խոր սահանքներից այս ահեղ դարի:
Ուզում եմ այսօր լինել եսասեր.
Քեզ քնքուշ, շոյիչ, պարզ խոսքեր ասել,
Խոսել գարունի՛ց, պատանությունի՛ց,
Քո աղջկական սատանությունի՛ց՝
Քո սուտ վանումից ու խուսափումից
Եվ, մի պահ հետո, քո ճիշտ հպումից:
Եվ կահավորել այն տունը գուցե,
Որ Քաղսովետից չենք էլ ստացել:
Եվ չհավանել այն վարագույրդ,
Որ չի նվիրել դեռ մորաքույրդ:
Տեսնել այն շորրդ, որ դեռ չես կարել,
Հուզվել այն երգից, որ դեռ չեն գրել:
Խոսել գեղեցիկ ու թանկ բաներից՝
Ծաղկի՛ց, պարտեզի՛ց, երեխաների՛ց,
Նրանց սպասող լավ մանկությունից,
Ապահով կյանքից, երջանկությունից:
Եվ լինել անհոգ, և անդարդ լինել,

Պարզապես սիրո՛ղ - ապրո՛ղ մարդ լինել,
Քեզնով զոհանալ, քեզնով հիանալ,
Քեզնով լիանալ
Ու քեզ միանալ...

26.IV.1957թ.
Մոսկվա